5. Դատական ծախսերի հարցը

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 10-րդ կետերի համաձայն՝ գործի քննության հետ կապված այլ ծախսերն են գործի քննության հետ կապված փաստաբանի խելամիտ վարձատրության գումարները, դատարանի կողմից գործի քննության համար անհրաժեշտ ճանաչված այլ ծախսերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Դատարանը, հիմք ընդունելով Հայցվորի պահանջը և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածը, 109-րդ հոդվածի 1-ին մասը, ու նկատի ունենալով, որ հայցը ենթակա է մերժման, դատական ծասխերի հարցը համարում է լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ, 109-րդ, 189-րդ, 192-րդ, 194-րդ, 198-րդ և 362-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. «Բի-Դի-Օ Ըդվայզորի» փակ բաժնետիրական ընկերության հայցն ընդդեմ «Ձեռնարկատեր+Պետություն հակաճգնաժամային ներդրումների կառավարիչ» փակ բաժնետիրական ընկերության՝ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը և մասնակիցների ցուցակում ներառելու մասին հրամանն անվավեր ճանաչելու պահանջների մասին մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Մ. ՍՏԵՓԱՆՅԱՆ**